ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՄՏԱՎՈՐ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅԱՆ
ԲՈՂՈՔԱՐԿՄԱՆ ԽՈՐՀՐԴԻ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

№ 28/08

Քաղ. Երևան 04 նոյեմբերի 2008թ.

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդը (այսուհետ՝ բողոքարկման խորհուրդ) հետևյալ կազմով՝ խորհրդի նախագահ Ա.Ֆ.Ազիզյան, անդամներ՝ Ա.Ս.Խաչիկյան, Բ.Շ. Վարդանյան, Գ.Հ.Ադամյան, Ա.Ա.Տոնիկյան և Ա.Վ.Բաբայան, իր 2008թ. նոյեմբերի 04-ի նիստում (արձանագրություն № 65/2) քննարկեց «Ռեոթերլոկ» ՍՊԸ-ի 2008թ. սեպտեմբերի 3-ի բողոքը ՀՀ էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության (այսուհետ՝ գործակալություն)՝ «mount ararat» բառերը պարունակող ապրանքային նշանի (հայտի No. 20071047) գրանցումը մերժելու մասին կրկնական փարձաքննության 06.06.2008թ որոշման դեմ:

2008թ. հունիսի 6-ի որոշմամբ կրկնական փորձաքննությունը «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքների ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ տեքստում նաև՝ օրենք) 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի և «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» (այսուհետ տեքստում նաև՝ կարգ) 15-րդ կետի 1-ին ենթակետի և 93-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն ապրանքային նշանի գրանցումը մերժել է՝ նույնատիպ ապրանքների համար ավելի վաղ առաջնությամբ գրանցված շփոթելու աստիճան նման «Նյու-Վեյվ» ՍՊԸ-ին պատկանող գրանցման թիվ 5201 «ARARAT NECTAR», «ՄԳԱ Վոթքր» ՍՊԸ-ին պատկանող «ԱՐԱՐԱՏ» բառը պարունակող գրանցման թիվ 8421 և «Ararat» բառը պարունակող գրանցման թիվ 10919, «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ին պատկանող գրանցման թիվ 7608 «KILIKIA BEER ARARAT 73 ԱՐԱՐԱՏ» բառերը պարունակող ապրանքային նշանների առկայության պատճառով:

Բողոքարկողի փաստարկները հետևյալն են՝

Բողոքարկողը իր անհամաձայնությունը հայտնելով կայացված որոշմանը, բողոքում ներկայացրել է գրանցման թիվ 5201 «ARARAT NECTAR», «ԱՐԱՐԱՏ» բառը պարունակող գրանցման թիվ 8421, «ARARAT» բառը պարունակող գրանցման թիվ 10919, «KILIKIA BEER ARARAT 73 ԱՐԱՐԱՏ» բառերը պարունակող գրանցման թիվ 7608 ապրանքային նշանների և «mount ararat» բառերը պարունակող (հայտի No. 20071047) ապրանքային նշանի միջև համեմատական վերլուծությունը: Ներկայացվել են ապրանքային նշանների նկարագրությունները և գրանցման թիվ 8421, 10919 և թիվ 7608 համակցված ապրանքային նշանների և «mount ararat» համակցված ապրանքային նշանի պատկերային մասերի շփոթելու աստիճան նման չլինելու փաստարկներ: Ներկայացվել է նաև գրանցման թիվ 8421, 10919, 7608 համակցված ապրանքային նշանների, գրանցման թիվ 5201 «ARARAT NECTAR» բառային ապրանքային նշանի և «mount ararat»

համակցված ապրանքային նշանի բառային մասերի շփոթելու աստիճան նման չլինելու հետևյալ փաստարկները՝

Որպես համընկնող տարրեր նշման արժանի են «Արարատ» գրառումները, որոնք ինքնուրույն պաշտպանության ենթակա չեն, հետևաբար ըստ կարգի 91-րդ կետի 2-րդ ենթակետի չպահպանվող տարրերը կարող են օգտագործվել այլ սուբյեկտների կողմից, եթե չեն կազմում նշանի գերիշխող մասը:

1. «Կիլիկիա Արարատ»-ում (գր. թիվ 7608) «ԱՐԱՐԱՏ» և «ARARAT» գրառումները կատարված են մեծատառ և տեղադրված են ալիքաձև ժապավենի վրա, որը գտնվում է նշանի ստորին մասում, աջ և ձախ ծայրերին:

«mount ararat»-ում «ararat» գրառումը կատարված է փոքրատառ, մեկ տողով, տեղադրված է նշանի ներքևի կեսի միջին մասում: Այսինքն համընկնող տարրերի (բառերի) թե՝ կատարման ոճը, թե դիրքը տարբեր են և չեն կարող առաջացնել շփոթելու աստիճան նմանություն: Համեմատելով նշանները ամբողջությամբ նշենք, «Կիլիկիա Արարատ»-ում տրամաբանական շեշտադրումը սպառողի կողմից ընկնում է կամ «Կիլիկիա» բառի վրա (ինչին նպաստում է պատկերված թագը), կամ ել «Արարատ 73» համակցության վրա (ինչին նպաստում է պատկերված ֆուտբոլային թիմը): «mount ararat»-ում տրամաբանական շեշտադրումը ընկնում է «mount ararat» համակցության վրա, ինչին նպաստում է պատկերված լեռան երկու գագաթների պատկերը և «mount» և «ararat» բառերի տեղադրումը իրար տակ:

2. «Արարատ»-ում (գր. թիվ 8421) «ԱՐԱՐԱՏ» գրառումը կատարված է մեծատառ հայերենով:

«mount ararat»-ում «ararat» գրառումը կատարված է փոքրատառ լատիներեն տառերով: Այսինքն համընկնող տարրերի (բառերի) կատարման ոճը տարբեր է և չի կարող առաջացնել շփոթելու աստիճան նմանություն: Համեմատելով նշանները ամբողջությամբ նշենք, «ԱՐԱՐԱՏ»-ում տրամաբանական շեշտադրումը սպառողի կողմից ընկնում է բազմագագաթ լեռնաշխարհի պատկերին, հայատառ «ԱՐԱՐԱՏ» գրառումով, ընդգծված սիմետրիկ ալիքաձև ժապավենով: «mount ararat»-ում տրամաբանական շեշտադրումը ընկնում է «mount ararat» համակցության վրա, ինչին նպաստում է պատկերված լեռան երկու գագաթների պատկերը և «mount» և «ararat» բառերի տեղադրումը իրար տակ, «mount» բառը ընդգծող ուղիղ գծից և «ararat» բառը ընդգծող իր ստվերով կցորդված աղեղնանման սլաքից:

3. «Ararat»-ում (գր. թիվ 10919) «Ararat» գրառման առաջին տառը գրված է մեծատառ, իսկ մնացածը փաքրատառ:

«mount ararat»-ում «ararat» գրառումը կատարված է փոքրատառ տառերով: Այսինքն համընկնող տարրերի (բառերի) կատարման ոճը և դիրքային ընկալումը տարբեր է և չի կարող առաջացնել շփոթելու աստիճան նմանություն: Համեմատելով նշանները ամբողջությամբ նշենք, «Ararat»-ում տրամաբանական շեշտադրումը սպառողի կողմից ընկնում է «Ararat» գրառման վրա տեղադրված Արարատ սարի պատկերին: «mount ararat»-ում տրամաբանական շեշտադրումը ընկնում է «mount ararat» համակցության վրա, ինչին նպաստում է պատկերված լեռան երկու գագաթների պատկերը և «mount» և «ararat» բառերի տեղադրումը իրար տակ, «mount» բառը ընդգծող ուղիղ գծից և «ararat» բառը ընդգծող իր ստվերով կցորդված աղեղնանման սլաքից:

4. «ARARAT NECTAR»-ում (գր. թիվ 5201) տրամաբանական շեշտադրումը սպառողի կողմից ընկնում է «ARARAT NECTAR» համակցության վրա, քանի որ բացակայում է որևէ ուրիշ տարր, բացի թույլ արտահայտված ոճավորման տարբերությունը:

«mount ararat»-ում տրամաբանական շեշտադրումը ընկնում է «mount ararat» համակցության վրա, ինչին նպաստում է պատկերված լեռան երկու գագաթների պատկերը և «mount» և «ararat» բառերի տեղադրումը իրար տակ, «mount» բառը ընդգծող ուղիղ գծից և «ararat» բառը ընդգծող իր ստվերով կցորդված աղեղնանման սլաքից:

Բողոքողը կից ներկայացրել է նաև ապրանքային նշանները առանց «ԱՐԱՐԱՏ», «ARARAT» բառերի:

Ելնելով վերոգրյալից բողոքողը եկել է եզրակացության, որ ապրանքային նշանները տարբեր են և չեն կարող առաջացնել սպառողի մոտ շփոթելու աստիճան նմանություն և ղեկավարվելով օրենքի 10-րդ հոդվածի 3-րդ մասով, կարգի 117-րդ կետով խնդրել է փոխել նախկին որոշումը և հայտում ներկայացված նշանը գրանցել որպես ապրանքային նշան:

Քննարկելով ներկայացված նյութերը բողոքում բերված հիմնավորումների շրջանակներում, հաշվի առնելով կոլեգիայի նիստում և բողոքարկման խորհրդի նիստում բողոքի ըստ էության քննարկման արդյունքները, բողոքարկման խորհուրդը պարզեց հետևյալը՝ գրանցման թիվ 8421, 10919 և թիվ 7608 համակցված ապրանքային նշանների և «mount ararat» համակցված ապրանքային նշանի պատկերային մասերը տարբեր են, սակայն գրանցման թիվ 8421 ապրանքային նշանում առկա է «ԱՐԱՐԱՏ» աշխարագրական անվամում՝ լեռան անվանում, հանդիսացող բառը, գրանցման թիվ 10919 ապրանքային նշանում առկա է «ARARAT» աշխարագրական անվամում՝ լեռան անվանում, հանդիսացող բառը, թիվ 7608 ապրանքային նշանում առկա են «ԱՐԱՐԱՏ» և «ARARAT» աշխարագրական անվամում՝ լեռան անվանում հանդիսացող բառերը, թիվ 5201 «ARARAT NECTAR» բառային ապրանքային նշանում առկա է «ԱՐԱՐԱՏ» աշխարագրական անվամում՝ լեռան անվանում, հանդիսացող բառը, «mount ararat» բառերը պարունակող (հայտի No. 20071047) ապրանքային նշանում առկա է «Արարատ» աշխարագրական անվամում՝ լեռան անվանում հանդիսացող բառը: «Ապրանքային և սպասարկման նշանների հայտերի ձևակերպման, ներկայացման և քննարկման կարգի» 91-րդ կետի 2-րդ ենթակետի 5-րդ և 6-րդ պարբերությունները սահմանում են՝

«Չպահպանվող տարրերի առկայությունն ու դրա հորինվածքային կապերը մնացած տարրերի հետ ապահովում են տվյալ ապրանքային նշանի տարբերակող հատկությունը, սակայն չպահպանվող տարրն այլ սուբյեկտի կողմից ևս կարող է բարեխճորեն օգտագործվել: Այս դեպքում չպահպանվող տարրերը սպառողի մոտ չպետք է շփոթություն առաջացնեն տարբեր արտադրողների կամ դրանց արտադրանքի հարցում:

Մասնավորապես շատ կարևոր է ապրանքային նշաններում աշխարհագրական նշումների ներառման հարցը այն դեպքերում, երբ առկա է արդեն օրենքի 11-րդ հոդվածի 3-րդ մասի «բ» կետով սահմանված պահանջներին համապատասխան գրանցված ապրանքային նշան, որի մեջ աշխարհագրական անվանումը կենտրոնական տեղ է զբաղեցնում (օրինակ՝ Երևանի կոնյակի գործարանի անունով թիվ 3192 գրանցում ունեցող պիտակի տեսքով ապրանքային նշանի մեջ օգտագործված են «Երևան» և «ЕРЕВАНե բառերը, որոնք պահպանությունից հանված են) և

ծառայում է որպես տվյալ ապրանքի յուրատեսակ առևտրային անվանում: Այս դեպքում մյուս տնտեսավարող սուբյեկտներն իրենց ապրանքային նշաններում կարող են օգտագործել «Երևան» անվանումը (այդ թվում՝ այլ լեզուներով)՝ նշելու համար իրենց գտնվելու կամ ապրանքի արտադրության վայրը, կամ իրենց ֆիրմային անվանումը, որի մեջ առկա է «Երևան» անվանումը և այլ տվյալներ, սակայն նրանք ապրանքային նշաններում չեն կարող օգտագործել «Երևան» անվանումը (այդ թվում՝ այլ լեզուներով), եթե այդ անվանումն օգտագործվում է որպես նույնատիպ ապրանքների առևտրային անվանում (այսինքն այսպիսի ապրանքային նշանների գրանցումը ենթակա է մերժման):»: Տվյալ դեպքում «mount ararat» բառերը պարունակող համակցված ապրանքային նշանում (հայտի No. 20071047) «Արարատ» աշխարագրական անվամում՝ լեռան անվանում, հանդիսացող բառը չի օգտագործվել որպես ընկերության գտնվելու կամ ապրանքի արտադրության վայրը նշելու համար կամ ֆիրմային անվանումը նշելու համար և այս չպահպանվող տարրի առկայությունը վիճարկվող ապրանքային նշանում շփոթություն է առաջացնում արտադրողների և դրանց արտադրանքի հարցում: Հետևաբար «mount ararat» բառերը պարունակող համակցված ապրանքային նշանի (հայտի No. 20071047) գրանցումը ենթակա է մերժման:

Բացի այդ կարգի 105-րդ կետը սահմանում է, որ համակցված նշանները համեմատվում են համակցված նշանների հետ և նշանների այն տեսակների հետ, որոնք ներառված են ստուգվող համակցված նշանի մեջ, տվյալ դեպքում բառային նշանն է: Համակցված նշանների նմանությունը որոշելիս օգտագործվում են սույն կարգի 98-104-րդ կետերում թվարկված հատկանիշները...: Իսկ կարգի 100-րդ կետը սահմանում է, որ ապրանքային նշանի իմաստային նմանությունը որոշվում է հետևյալ չափանիշների հիման վրա՝ 1) նշանների մեջ դրված նման հասկացության, գաղափարի, մասնավորապես տարբեր լեզուներով նշանների համընկնող իմաստի. 2) նշանների տարրերից որևէ համընկնող տարրի, որն առանձին իմաստ ունի և որի վրա ընկնում է տրամաբանական շեշտադրումը. 3) նշանների մեջ դրված հասկացությունների, գաղափարների հակադրության: Տվյալ դեպքում ապրանքային նշաններում օգտագործված «ԱՐԱՐԱՏ» բառը հիմնականում ասոցիացվում է և նշում է հենց Արարատ լեռը՝ աշխարհագրական անվանումը, հետևաբար ապրանքային նշաններում դրված է նույն հասկացությունը, գաղափարը: Կարգի 101-րդ կետը սահմանում է, որ «Սույն կարգի 98-100-րդ կետերում թվարկված հատկանիշները հաշվի են առնվում ինչպես առանձին, այնպես էլ տարբեր համակցություններում», այսինքն ապրանքային նշանների իմաստային առումով շփոթելու աստիճան նմանությունը տվյալ դեպքում բավարար է ապրանքային նշանը շփոթելու աստիճան նման համարելու համար:

Ոէստի «mount ararat» բառերը պարունակող համակցված ապրանքային նշանը (հայտի No. 20071047) շփոթելու աստիճան նման է հակադրված ապրանքային նշաններին, և հայտարկված ապրանքային նշանի գրանցումը ենթակա է մերժման:

Ինչ վերաբերում է բողոքարկողի այն պնդմանը, որ նույն դասում գրանցվել են տարբեր ընկերություններին պատկանող «Արարատ» բառը պարունակող ապրանքային նշաններ, ապա այն անհիմն է, քանի որ «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքերի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի համաձայն «Որպես ապրանքային նշան չեն կարող գրանցվել այն նշանները, որոնք նույնական կամ շփոթելու աստիճան նման են՝ նույն կամ նույնատիպ ապրանքների համար Հայաստանի Հանրապետությունում այլ անձի անունով արդեն

գրանցված կամ գրանցման ներկայացված ավելի վաղ առաջնությամբ ապրանքային նշանին», այսինքն խոսքը գնում է նույն կամ նույնատիպ ապրանքների մասին, տվյալ դեպքում «Նյու-Վեյվ» ՍՊԸ-ին պատկանող գրանցման թիվ 5201«ARARAT NECTAR» ապրանքային նշանը գրանցված է «մրգային ըմպելիքներ և մրգահյութեր» ապրանքների համար, նույն «ՄԳԱ Վոթըր» ՍՊԸ-ին պատկանող «ԱՐԱՐԱՏ» բառը պարունակող գրանցման թիվ 8421 և «Ararat» բառը պարունակող գրանցման թիվ 10919 ապրանքային նշանները գրանցված են «ջուր, հանքային ջուր, խմելու ջուր» ապրանքների համար, «Երևանի գարեջուր» ՓԲԸ-ին պատկանող գրանցման թիվ 7608 «KILIKIA BEER ARARAT 73 ԱՐԱՐԱՏ» բառերը պարունակող ապրանքային նշանը գրանցված է «գարեջուր» ապրանքի համար, այսինքն լրիվ տարբեր ապրանքների համար են գրանցվել: Նշենք նաև, որ հենց բողոքողը ևս դա ընդունեց:

Ելնելով վերոգրյալից բողոքարկման խորհուրդը գտնում է, որ կրկնական փորձաքննությունը կատարվել է օրենքի և կարգի պահանջներին համապատասխան և «mount ararat» բառերը պարունակող համակցված ապրանքային նշանի (հայտի No. 20071047) գրանցումը ենթակա է մերժման:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Ապրանքային և սպասարկման նշանների, ապրանքերի ծագման տեղանունների մասին» ՀՀ օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի «ա» ենթակետի, կարգի 15-րդ կետի 1-ին ենթակետով, 91-րդ կետի 2-րդ ենթակետի 5-րդ և 6-րդ պարբերություններով, 100-րդ, 101-րդ, 105-րդ կետերով, «Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության մտավոր սեփականության գործակալության բողոքարկման խորհուրդ բողոքների և դիմումների ներկայացման և քննարկման կարգի» 67-րդ կետի «բ» ենթակետով բողոքարկման խորհուրդը

Ո Ր Ո Շ Ե Ց

Մերժել «ՈՒոթերլոկ» ՍՊԸ-ի 2008թ. սեպտեմբերի 3-ի բողոքը և կրկնական փորձաքննության 2008թ. հունիսի 6-ի որոշումը՝ «mount ararat» բառերը պարունակող ապրանքային նշանի (հայտի No. 20071047) գրանցումը մերժելու մասին, թողնել ուժի մեջ:

Բողոքարկման խորհրդի որոշումը կարող է օրենքով սահմանված կարգով բողոքարկվել դատարանում:

Բողոքարկման խորհրդի
նախագահ Ա.Ազիզյան